

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ\*

### Էդգար Քալանթարյան

**Բանալի բառեր` տեղեկատվական հասարակություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS), սոցիալական հեղափոխություն, հասարակություն, պետական քաղաքականություն, քաղաքակրթական զարգացում:**

20-րդ դարավերջին տեղի ունեցած տեղեկատվական հեղափոխության արդյունքը դարձավ 21-րդ դարի տեղեկատվական հասարակության ձևավորումը [1]: Տեղեկատվական հասարակության ակունքներում «տեղեկատվական հեղափոխությունն է», որն իր հերթին առաջ եկավ որպես զուգահեռաբար զարգացող երկու գործընթացների հետևանք. այդ գործընթացներից մեկը` տեղեկատվության դերի անընդմեջ բարձրացումն ու տեղեկատվության ծավալների բազմապատկումն է, երկրորդը` նոր տեխնոլոգիաների մշակումը և դրանց կատարելագործումը [2]:

20-րդ դարի 50-70-ական թթ. ակնհայտ դարձավ, որ մարդկությունը նոր դարաշրջան է մուտք գործում, որի ճանապարհը հարթվել է տեխնիկայի, համակարգիչների և գիտական-տեխնիկական հեղափոխության բուռն զարգացման շնորհիվ: «Տեխնիկացված» և «ինֆորմատիզացված» աշխարհում մարդու գոյության խնդիրը չէր կարող չմտախոգել քաղաքագետներին, ըստ այդմ էլ ծնվեց «տեղեկատվական հասարակություն»[3] հասկացությունը: Տվյալ խնդրի վերաբերյալ տարբեր փիլիսոփաներից և քաղաքագետներից ոչ մեկը չէր կասկածում, որ մարդկային կյանքը հիմնովին կվերափոխվի այդ նոր հասկացությունների ձևավորման շրջանակներում, սակայն շատերն այդ խնդիրները միակողմանի են վերլուծել. օրինակ` քաղաքական, տնտեսական կամ սոցիալական տեսանկյունից [4]:

Այս նոր տերմինները օբյեկտիվորեն արտահայտում են քաղաքակրթական նոր զարգացումների էությունը, որը պայմանավորված էր առաջին հերթին տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ի հայտ գալով, կյանքի նոր որակով և հասարակության ներսում առաջացող նոր պահանջմունքներով [5]: «Տեղեկատվական հասարակություն» հասկացությունը հետինդուստրիալ հասարակության տարատեսակ է: Հասարակական զարգացումը դիտարկելով որպես «փոխեփոխ» փուլեր` դրա կախացումը կապում են տնտեսության «չորրորդ» տեղեկատվական հատվածի գերիշխանության հետ, որին նախորդում են գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը և սպասարկման ոլորտները: Ընդ որում` պնդում են, որ կապիտալն ու աշխատանքը` որպես ինդուստրիալ հասարակության հիմքեր, տեղեկատվական հասարակության մեջ իրենց տեղը զիջում են տեղեկատվությանն ու գիտելիքին:

Յուրաքանչյուր պետության տեղեկատվական հասարակության զարգացումը պահանջում է ոչ միայն մտավոր, այլ նաև նյութական մեծ ծախսեր տեղեկատվական միջավայրի ձևավորման ու զարգացման, տեղեկատվական ծառայությունների արդյունաբերության և այդ ծառայությունները հասարակության յուրաքանչյուր անդամին «հասցնելու» համար [6]:

\* Հոդվածն ընդունվել է 28.11.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

Անցումը դեպի տեղեկատվական հասարակություն կարելի է նշել հետևյալ դրսևորումներով.

– տնտեսության կառուցվածքային փոփոխություններ, հատկապես աշխատուժի բաշխման և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում (օրինակ՝ ահռելի մասշտաբի մարդկային ռեսուրսների ու արտադրական/կազմակերպական կառուցվածքների կառավարման հնարավորություն).

– համակարգչային գրագիտության անհրաժեշտության գիտակցման տարածում, կրթության տեղեկատվայնացում, հասարակության տեղեկատվայնացման տարածում.

– տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմանը աջակցություն կառավարության կողմից.

– բացասական դրսևորումների տարածում (օրինակ՝ համակարգչային վիրուսներ, հարձակումներ ենթակառուցվածքների տեղեկատվական բաղկացուցիչների վրա) և այլն:

Որոշ հեղինակների կարծիքով՝ տեղեկատվական հասարակության կառուցումը սոցիալ-քաղաքական բարդ խնդիր է, որը չի կարող լուծվել կարճ ժամկետում: Նախ և առաջ պետք է փոխել արժեքներն ու ազգային կարծրատիպերը: Այն մարդկային պատմության զարգացման այնպիսի փուլ է, երբ կոլեկտիվ բանականությունը դառնում է ոչ միայն «Homo Sapiens»-ի զարգացման հիմքը, այլև վերածվում է մի օբյեկտի, որի կատարելագործմանն են ուղղված հասարակության բոլոր ջանքերը [7]: Մասնագիտական գրականության մեջ տարածված է այն միտումը, որ «հասարակության զարգացման շարժիչ ուժն է լինելու ոչ թե նյութականը, այլ տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունքների ստեղծումը [8]»: Այսպիսի հասարակության հայեցակարգի հիմնադիրներին բնորոշ է որոշակի ուտոպիզմ. նման հասարակությունում չկան դասակարգեր և հակասություններ, տիրում է ներդաշնակություն ու համերաշխություն, կարիք չկա պետական մեծ ապարատի և այլն: Վերջինիս ձևավորումը բարդ և ծախսատար գործընթաց է: Այդ գործընթացում հաջողության հասնելու կարևոր նախապայման է անհրաժեշտ օրենսդրության և իրավական դաշտի ձևավորումը, որը կնպաստի հասարակական կյանքում տեղեկատվության, գիտելիքի և ՏՏ-ի դերի մեծացմանը, ինչպես նաև առավել արդյունավետ պետական կառավարման ամրապնդմանը: Տեղեկատվական հասարակության ձևավորումը պետք է ընթանա տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) հասանելիության ապահովման, հասարակության համար համապատասխան տեղեկատվական ռեսուրսների ու առցանց ծառայությունների ստեղծման, քաղաքացիների կրթական մակարդակի բարձրացման և տարբեր համալիր ծրագրերի ու միջոցառումների համակարգված և հետևողական իրականացման շնորհիվ: Այսպիսի հասարակության կառուցման հիմնական գործոններից են տեղեկատվական և հաղորդակցական ենթակառուցվածքը [9], որտեղ մեծ դեր ունեն հասարակական կազմակերպությունները («Ինֆորմացիայի ազատության կենտրոն», «Տեղեկատվական իրավունքի ինստիտուտ», «Տեղեկատվական այլընտրանք» և այլ հասարակական կազմակերպություններ): Այդպիսի կազմակերպություններն իրենց գործառնություններով և իրականացրած աշխատանքներով նպաստում են հասարակության լայն խավերի, շահառու խմբերի շրջանակներում տեղեկատվական հասարակության խնդիրների լուսաբանմանը, ինչը չափազանց մեծ օժանդակություն է պետական արդյունավետ կառավարման համար:

Տեղեկատվական հասարակության բնութագրիչներից են՝

– տեղեկատվության, գիտելիքի և տեղեկատվական տեխնոլոգիաների դերի մեծացումը հասարակական կյանքում,

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

– տեղեկատվական տեխնոլոգիաների, ապրանքների ու ծառայությունների, ինչպես նաև հաղորդակցության ոլորտներում աշխատող մարդկանց թվի աճը,

– հասարակության տեղեկատվայնացման (informatization) աճը՝ հեռախոսակապի, ռադիոյի, հեռուստատեսության, համացանցի, ավանդական ու էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) կիրառմամբ,

– գլոբալ տեղեկատվական միջավայրի զարգացումը, որն ապահովում է մարդկանց արդյունավետ տեղեկատվական փոխգործակցությունը,

– տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը արտադրության, կազմակերպությունների գործունեության, կրթության ու կենցաղի մեջ (տեխնոլոգիական բնութագրիչ),

– տեղեկատվության՝ իբրև կենսամակարդակի բարձրացման կարևոր խթան լինելը, նաև՝ տեղեկատվության լայնամասշտաբ կիրառումը, որի շնորհիվ ձևավորվում է տեղեկատվական գիտակցություն (սոցիալական բնութագրիչ),

– տեղեկատվությունը իբրև տնտեսական գործոն՝ ռեսուրս, ծառայություն, ապրանք, ինչպես նաև՝ ավելացված արժեքի ու զբաղվածության աղբյուր (տնտեսական բնութագրիչ),

– տեղեկատվության ազատությունը, պայմանավորված հասարակության տարբեր շերտերի աճող մասնակցությամբ և փոխհամաձայնությամբ (քաղաքական բնութագրիչ),

– տեղեկատվության մշակութային արժեքի ճանաչումը՝ անհատի և հասարակության զարգացման համար տեղեկատվական արժեքների հաստատման աջակցության միջոցով (մշակութային բնութագրիչ):

Տեղեկատվական հասարակության զարգացման գործում որոշիչ նշանակություն ունի պետական կառավարման մարմինների և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը, որի համար անհրաժեշտ է համագործակցություն նրանց բոլորի միջև: Միևնույն ժամանակ յուրաքանչյուր ոք պետք է տիրապետի տեղեկատվական հասարակության ընձեռած առավելություններն օգտագործելու անհրաժեշտ հմտություններին: Այդ նպատակով պետք է ստեղծել ներուժ և բարձրացնել զրագիտությունը ՏՀՏ ոլորտում: Հնարավորություն ընձեռել բնակչության (նախ և առաջ՝ հեռավոր մարզերի և գյուղական բնակավայրերում բնակվող) համար ՏՀՏ-ի հիմնային առավելություններին տիրապետելու, ինչպես նաև բարձրացնելու վերջիններիս ճանաչելիության մակարդակը նորագույն տեխնոլոգիական հնարավորությունների և առավելությունների հանդեպ: Իրականացնել կրթական և մասնագիտական պատրաստման ծրագրեր՝ օգտագործելով ազգային փոքրամասնությունների տեղեկատվական ցանցերը, որպեսզի հնարավորություն ընձեռվի ապահովելու վերջիններիս լիարժեք մասնակցությունը տեղեկատվական հասարակության մեջ:

Տեղեկատվական հասարակությունը նմանեցվում է բուրգի, որը կազմված է չորս օղակներից.

1. պետական իշխանության մարմիններ, որոնցում գլխավոր դերը պատկանում է կառավարությանը.

2. տեղեկատվական հասարակության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններ.

3. զանգվածային լրատվության միջոցներ՝ ի դեմս հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի, այդ ոլորտում զբաղված քաղաքացիների և այլն.

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

4. քաղաքացիների այն հատվածը, որն այս կամ այն չափով իր կենսագործունեության մեջ կիրառում է տեղեկույթը, օգտվում է ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներից, ստանում կրթություն և այլն:

Տեղեկատվական հասարակության ընձեռած սոցիալական, տնտեսական, քաղաքական, բնապահպանական օգուտները առավելագույնի հասցնելու համար պետական կառավարման մարմինները պետք է ստեղծեն հուսալի, թափանցիկ և ոչ խտրական իրավական, կարգավորիչ և քաղաքական միջավայր: Այդ նպատակով պետական կառավարման մարմինները պետք է նպաստեն բարենպաստ, թափանցիկ, մրցակցությունը խրախուսող ու կանխատեսելի քաղաքական, իրավական, կարգավորիչ շրջանակների ստեղծմանը: [10]

Այսօր «տեղեկատվական հասարակություն» եզրույթը ներառում է.

– նոր տիպի հասարակություն, որը ձևավորվել է նոր, գլոբալ սոցիալական հեղափոխության հետևանքով,

– գիտելիքի հասարակություն, այսինքն՝ հասարակություն, որտեղ յուրաքանչյուր մարդու և պետության բարեկեցության գլխավոր պայմանը դառնում է գիտելիքը,

– գլոբալ հասարակություն, որտեղ հաղորդակցումը չունի ոչ ժամանակային, ոչ տարածական, ոչ քաղաքական սահմաններ: Այն մի կողմից նպաստում է մշակույթի ներթափանցմանը, մյուս կողմից՝ բացում նոր հնարավորություններ ինքնանույնականացման համար:

Պետական իշխանության մարմինների և հասարակության միջև տեղեկատվության փոխանակման ժամանակակից մեթոդների զարգացման հիմքի վրա ստեղծվում են սկզբունքորեն նոր հնարավորություններ տեղեկատվության մատչելիության և որոշումների ընդունման հրապարակայնության ապահովման, հասարակության և պետական իշխանության մարմինների միջև փոխգործակցության ու վստահության մակարդակի բարձրացման համար: Այս ամենով հանդերձ՝ առավել արդյունավետ պետական կառավարման համար անհրաժեշտ է՝

– ՏՀՏ խնդիրը դարձնել ազգային առաջնահերթություններից մեկը,

– համախմբել ՏՏ ոլորտի լավագույն մասնագետների մտավոր ուժը,

– առավելագույնս կենտրոնացնել իշխանական մարմինների ուշադրությունը ՏՀՏ քաղաքականության վրա ինչպես ընդհանուր պետական (մարզային), այնպես էլ պետական հաստատությունների մակարդակով,

– ոլորտի գործունեությունը պետք է դարձնել առավել թափանցիկ և հաշվետու, ինչը կխթանի արդյունավետության բարձրացումը:

Այսպիսով՝ պետական կառավարման արդյունավետությունը պայմանավորված է տեղեկատվական հասարակության զարգացվածությամբ: Դրանց ձևերի փոխակերպումը թույլ է տալիս բարձրացնել պետության կողմից հասարակությանը մատուցված ծառայությունների որակը և արդյունավետությունը՝ կրճատելով բյուրոկրատիան: Այն էլ ավելի կլինայի պետական ապարատի պահպանման համար նախատեսված ծախսերը՝ թեթևացնելով քաղաքացիների մուտքը և հասանելիությունը պետական իշխանության ինստիտուտներ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Martin B. Information society revisited: from vision to reality // Journal of Information Science, 2005, T., 31, № 1, էջ 4-12:
2. Рожкова А.И. Концептуальные основы правовой информационной политики//Правовая политика и правовая жизнь. 2008. № 3. էջ 128-134:
3. «Տեղեկատվական հասարակություն» գաղափարը բնութագրում է հասարակության տեսակ, որտեղ տեղեկատվության և գիտելիքի ստեղծումը, օգտագործումն ու մշակումը հանդիսանում են կարևոր տնտեսական, քաղաքական և մշակութային գործոններ: Հաճախ օգտագործում են որպես «Գիտելիքի հասարակություն», «Հետադյունաբերական հասարակություն» հասկացություններ:
4. Поляков А.А., Цветков В.Я. Информационные технологии в управлении, М.: МГУ факультет государственного управления, 2007, էջ 138:
5. Van Wingen R.S., Hathorn F., Sprehe J.T. Principles for information technology investment in u.s. federal electronic records management//Journal of Government Information, 1999, T., 26. № 1, pp.33-42:
6. Տե՛ս Սուքիասյան Հ. Տեղեկատվական հասարակություն և սոցիալ քաղաքական հիմնախնդիրներ, Եր., 2003, էջ 182:
7. Моисеев Н. Информационное общество как этап новейшей истории, 1996, №1, էջ 81-83:
8. Հարությունյան Գ. ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2002, էջ 13:
9. Տե՛ս Բայադյան Հ. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ և հասարակություն, Եր., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2012, էջ 43:
10. Տե՛ս Թոֆլեր Է., Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, Եր., 2006, էջ 63-64:

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Տեղեկատվական հասարակությունը արդյունավետ կառավարման երաշխիք էղգար Քալանթարյան**

20-րդ դարի 50-70-ական թթ-ին ակնհայտ դարձավ, որ մարդկությունը նոր դարաշրջան է մուտք գործում, որի ճանապարհը հարթվել է տեխնիկայի, համակարգիչների և գիտական-տեխնիկական հեղափոխության բուռն զարգացման շնորհիվ: «Տեխնիկացված» և «ինֆորմատիզացված» աշխարհում մարդու գոյության խնդիրը չէր կարող չմտահոգել քաղաքագետներին, ինչի արդյունքում էլ ծնվեց «տեղեկատվական հասարակություն» հասկացությունը: «Տեղեկատվական հասարակություն» հասկացությունը հետինդուստրիալ հասարակության տարատեսակ է: Վերջինիս զարգացման գործում որոշիչ նշանակություն ունի պետական կառավարման մարմինների և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը, որի համար անհրաժեշտ է համագործակցություն բոլորի միջև: Այդ նպատակով պետք է ստեղծել ներուժ և բարձրացնել գրագիտությունը ՏՀՏ (տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում), որոնք էլ կնպաստեն տեղեկատվական հասարակության առավել ինտենսիվ զարգացմանը:

РЕЗЮМЕ

**Информационное общество как гарантия обеспечивающая эффективное управления  
Эдгар Калантарян**

**Ключевые слова:** информационное общество, информационные технологии, социальная революция, общество, государственная политика, развитие цивилизации.

В период с 1950-х по 1970-е годы XX века человечество вступило в новую эру, которая была стимулирована быстрым развитием компьютеров и научно-технологической революцией. Вопрос о существовании человечества и дальнейшего его развития в конкретном «технически оборудованном» и «информационно насыщенном» мире не может быть исключен из политической повестки дня. Вскоре появились понятия информационное и «медиа-общества». Концепция информационного общества тесно связана с теорией постиндустриального общества. Более того, он является ее составной частью. Развитие информационного и медиа общества играет решающую роль в развитии сотрудничества между всеми органами государственного управления и заинтересованными группами, участвующими в этом процессе. Поэтому необходимо повысить потенциал и уровень грамотности в области информационно-коммуникационных технологий (ИКТ) среди общества, что, в свою очередь, обеспечит более интенсивное развитие медиа-сообщества.

SUMMARY

**Information Society as the Effective Governance Guarantee.  
Edgar Kalantaryan**

**Key words:** *information society, information technologies (IT), social revolution, society, state policy, development of civilization.*

In the period between 1950s and 1970s of the 20th century the mankind entered a new era, the path to which was thrived by the rapid development of computers, but also scientific and technological revolutions. The issue of human live and further development in a specific “technically equipped” and “information-flooded” world could not excluded from political agenda and politicians’ attention. In that way a notion of a “media society” was born. The information society concept closely related to the theory of post-industrial society. Moreover, it is a consisting part of it. The development of information society has a decisive role in case of cooperation between all public administration bodies and interested groups participating in it. Therefore, it is necessary to enhance the potential and to raise literacy rates in the field of information and communication technologies (ICT) among society that will ensure more intensive development of the media society.